



## Վիկտոր Էռնեստի Սողոմոնյան

Ծնվել է 1979 թվականի մարտի 17-ին Երևանում: 1999-ին գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1997-ից զբաղվել է հեռուստալրագրությամբ: Մի շարք ծրագրերի հեղինակ և վարող, վավերագրական և հրապարակախոսական ֆիլմերի հողինակ է, 2001-2002թթ.` Հայկական Երկրորդ հեռուստաալիքի քաղաքական մեկնաբան: Դասավանդել է Հայ-ռուսական Սլավոնական պետական համալսարանում (2000-2002), Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում (2006), Մոսկվայի պետական Միջազգային հարաբերությունների ինստիտուտ-համալսարանում (МГИМО(У), 2010): 2003թ. աշխատել է որպես Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահի աշխատակազմի ղեկավար: 2005-2008թթ.` ՀՀ նախագահի մամուլի քարտուղար: 2005-2010թթ.` ԵրՊԼՀ Խորհրդի նախագահ: 2008թ. մայիսից` Հայաստանի պաշտոնաթող նախագահ Ռոբերտ Զոչարյանի գրասենյակի ղեկավարն է: Բանասիրական գիտությունների թեկնածու: